# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Աբովյան համայնք,
ՀՀ, Արարատի մարզ, գ. Աբովյան, Հեռ. (098)550001 ,
abovyan.ararat@mta.gov.am

N 18
*04 փետրվար 2016թ.*

ՀՀ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
ՄԱՐԶՊԵՏ
ՌՈՒԲԻԿ ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻՆ

Հարգելի պարոն մարզպետ Ռ. Աբրահամյան

Կից ներկայացնում ենք թիվ 7, թիվ 8, թիվ 9, թիվ 10 ավագանու որոշումները

Առդիր 4 էջ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՎԵՏԻՔ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

*Կատ. Աշխատակազմի քարտուղար՝ Վ. Մուրադյան*

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Աբովյան համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Աբովյան, (098)550001, abovyan.ararat@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

26 ՀՈՒՆՎԱՐԻ 2016թվականի N 7

## ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ 2016 ԹՎԱԿԱՆԻ 2-ՐԴ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական Ինքնակառավարման Մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի պահանջներով

համայնքի ավագանին որոշում է՝

Հաստատել համայնքի ավագանու թիվ 2-րդ նիստի օրակարգը.

1. Համայնքի հողային հաշվեկշռից դուրս մնացած հողերի մասին

2. 2016 թվականի Աբովյան համայնքի մշակույթի տան վերանորոգման շինարարական աշխատանքների թույլտվության մասին

3. Աբովյան համայնքում մանկապարտեզ կառուցելու մասին

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ԱՇՈՏ կողմ
2. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՐԱՅԻԿ կողմ
3. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԴԱՎԻԹ կողմ
4. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ԻՇԽԱՆ կողմ
5. ՊԵՏՐՈՍՅԱՆ ԼևՈՆ կողմ
6. ՍԱՐԳՍՅԱՆ ՍՈՒՐԻԿ կողմ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՎԵՏԻՔ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Աբովյան համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Աբովյան, (098)550001, abovyan.ararat@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26 ՀՈՒՆՎԱՐԻ 2016թվականի N 8

## ՀԱՄԱՅՆՔԻ ՀՈՂԱՅԻՆ ՀԱՇՎԵԿՇՌԻՑ ԴՈՒՐՍ ՄՆԱՑԱԾ ՀՈՂԵՐԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Կառավարությանն Առընթեր Կադաստրի Պետական Կոմիտեի նախագահի 01.06.2010 թվականի թիվ 186-Ն հրամանի պահանջներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 06.11.2003 թվականի 1432-Ն որոշումը

համայնքի ավագանին որոշում է՝

Հիմք ընդունելով կառավարության 06.11.2003 թվականի թիվ 1432-Ն որոշումը, որի ժամանակ թաղ 0142-ում գտնվող 0,33292 հա և թաղ 0138-ում գտնվող 0,74642 հա հողամասերը սխալմամբ չեն փոխանցվել որպես համայնքային սեփականություն և հաշվի առնելով, որ վերը նշված հողամասերի նկատմամբ չկան որևէ իրավունքի պետական գրանցման փաստաթղթեր, ուստի համայնքի ավագանին որոշում է 0,33292 հա և 0,74642 հա հողամասերը ճանաչել որպես համայնքային սեփականություն:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ԱՇՈՏ
2. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՐԱՅԻԿ
3. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԴԱՎԻԹ
4. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ԻՇԽԱՆ
5. ՊԵՏՐՈՍՅԱՆ ԼևՈՆ
6. ՍԱՐԳՍՅԱՆ ՍՈՒՐԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՎԵՏԻՔ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Աբովյան համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Աբովյան, (098)550001, abovyan.ararat@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

26 ՀՈՒՆՎԱՐԻ 2016թվականի N 9

## 2016 ԹՎԱԿԱՆԻ ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՏԱՆ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական Ինքնակառավարման Մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 4-րդ կետի պահանջներով

համայնքի ավագանին որոշում է՝

1.Տալ Աբովյան համայնքի մշակույթի տան վերանորոգման շինարարության թույլտվություն

2. Չգանձել շինարարության թույլտվության համար նախատեսված տեղական տուրքը:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ԱՇՈՏ կողմ
2. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՐԱՅԻԿ կողմ
3. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԴԱՎԻԹ կողմ
4. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ԻՇԽԱՆ կողմ
5. ՊԵՏՐՈՍՅԱՆ ԼևՈՆ կողմ
6. ՍԱՐԳՍՅԱՆ ՍՈՒՐԻԿ կողմ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՎԵՏԻՔ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Աբովյան համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Աբովյան, (098)550001, abovyan.ararat@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

26 ՀՈՒՆՎԱՐԻ 2016թվականի N 10

## ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ ԿԱՌՈՒՅԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական Ինքնակառավարման Մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ կետով և , առաջնորդվելով համայնքի քառամյա ծրագրի պահանջներով և համայնքի Տեղական Ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության կարգի 4.2.1 կետի պահանջներով

համայնքի ավագանին որոշում է՝

1. Առաջնորդվելով 18.01.2016թ. համայնքում կայացած հանրային բաց լսումների արդյունքում համայնքի Զարգացման Ծրագրում որպես կարևորագույն խնդիր ընտրված մանկապարտեզի կառուցման առաջարկությունը

2. Հայաստանի Տարածքային Զարգացման Հիմնադրամի կողմից իրականացվող Սոցիալական Ներդրումների և Տեղական Զարգացման ծրագրերի շրջանակում, ծրագրին մասնակցելու համար դիմել Հայաստանի Տարածքային Զարգացման Հիմնադրամին՝ համայնքի հետևյալ առաջնահերթ խնդրանքով. Աբովյան համայնքում կառուցելու մանկապարտեզ

3. Հայտի հաստատման դեպքում կատարել 7 տոկոս ներդրում՝ ՄՆՏԶ Ծրագրի պահանջներին համապատասխան

4. Ծրագրի իրականացման դեպքում, կառուցված ենթակառուցվածքի շահագործման և պահպանման անհրաժեշտ ծախսերը ներառել համայնքի բյուջեում

5. Հանձնարարել գյուղապետարանի աշխատակազմին պատրաստել և ՀՏԶՀ-ին ներկայացնել համապատասխան հայտ ծրագրին մասնակցելու վերաբերյալ:

6. Կառուցված ենթակառուցվածքը չօտարել, չսեփականաշնորհել կամ չօգտագործել այլ նպատակներով ծրագրի ավարտից հետո 40 տարվա ընթացքում:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ԱՇՈՏ
2. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՐԱՅԻԿ
3. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԴԱՎԻԹ
4. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ԻՇԽԱՆ
5. ՊԵՏՐՈՍՅԱՆ ԼՅՈՎԱ
6. ՍԱՐԳՍՅԱՆ ՍՈՒՐԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՎԵՏԻՔ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ